

## Խոհեմություն

*Օձերի պէս խորագէտ եղէք եւ աղաւնիների պէս՝ միամիտ:* - Մատթ. 10:16.

Քաղուած Անդրէ Կոմտ-Սպունվիլի *“Մեծ Առաքինությունների մասին Կարճ Տրակտատ. Առօրեայ Կեանքում Բնաստասիրութեան Օգտագործումը”* (Լոնդոն, 2001. ֆրանսերէնից անգլերէն թարգամուած Քաթերին Թեմերսոնի կողմից)

[André Comte-Sponville, (trans. Catherine Temerson), *A Short Treatise on the Great Virtues: The Uses of Philosophy in Everyday Life*, (London: William Heinemann, 2001)]

Խոհեմութիւնը դասական եւ միջնադարեան աշխարհի չորս հիմնական առաքինություններից մէկն է:<sup>1</sup> ... Կարծես թէ խոհեմութիւնը չափից դուրս պատեհ է բարոյական լինելու համար, ինչպէս եւ պարտականութիւնը չափազանց վերջնական է խոհեմ լինելու համար:

Մենք այլեւս բաւարար չափով չենք հաւատում վերջնականութեանը, որ կամենանք մեր կեանքները, մեր ընկերները կամ մարդկանց գոհենք գաղափարախօսութեան համար: Յիրաւի, կարծում եմ որ մենք այսպիսի համոզմունքի բարոյականութեան՝ ինչպէս այն կոչում է Մաքս Վեբերը (“*Gesinnungsethik*”), բաւական վախենալիք կը գտնէինք: Վերջնական, ամբողջական սկզբունքներ պահպանելն ի՞նչ արժէք ունի, եթէ այն ի վնաս է՝ պարզ մարդկայնութեան, իսելամտութեան, մեղմութեան ու կարեկցանքի: Սովորել ենք նոյնիսկ բարոյականութեան հանդէպ զգոյշ լինել, եւ ինչքան այն վերջնական է իրեն յաւակնում, այնքան էլ մենք կը կասկածենք նրան: Մեզ համար համոզմունքի բարոյականութիւնից աւելի գերադասելի՝ Մաքս Վեբերի կողմից կոչուող պատասխանատուութեան բարոյականութիւնն է (“*Verantwortungsethik*”), որը՝ առանց սկզբունքներին անտեսելով (այլ կերպ ինչպէ՞ս կարելի է), հաշուի է առնում նաեւ արարքների նախատեսելի հետեւանքներին: Բարի նպատակները կարող են աղէտի հասցնել, եւ դրոման մաքրութիւնը երբեք չի կարողացել վատագոյնը կանխել: Ճիշտ դրոմապատճառները մենակ բաւարար չեն, իսկ սխալ կը լինէր այնպէս գործել, որ դրանք բաւարար են: Ուստի, պատասխանատուութեան բարոյականութիւնը պահանջում է, որ պատասխան տանք ոչ միայն ըստ մեր նպատակների կամ սկզբունքների, այլ նաեւ մեր արարքների հետեւանքների համար՝ այնքանով, որ դրանք կանխատեսելի են: Խոհեմութեան բարոյականութիւն է՝ միակ ընդունելի բարոյականութիւնը: Գէշտապոյին սուտ խօսելը *նախընտրելի է*, քան հրեային կամ դիմադրողական մարտիկին մատնելը: Բայց յանուն ինչի՞: Յանուն խոհեմութեան, որն է ճիշտ վճռել (մարդու համար եւ մարդու կողմից) թէ *նախընտրելի է* ինչ է նշանակում:

<sup>1</sup> Միւսները համարձակութիւն, չափաւորութիւն եւ արդարութիւն են:

Գիտենք, որ հռովմեացիները յունարենից “phronesis” թարգմանեցին որպես “prudentia”, մանաւանդ Արիստոտելի եւ Ստոիկ դպրոցի աշխատանքների թարգմանություններում: Ի՞նչ է նկարագրում այս բառը: Մտաւորական առաքինություն, եւ բանականություն. խոհեմությունն այն հակումն է, որով կարելի է ճիշտ կողմնորոշել, թէ մարդու համար ինչը լաւ է եւ ինչը՝ վատ (ոչ թէ որպէս այդպիսին, բայց աշխարհում՝ ինչպէս որ է, իսկ ոչ թէ առ հասարակ, այլ մասնաւոր դէպքերում) եւ՝ այդպիսի կողմնորոշմամբ, պատշաճ քայլը կատարել: Կարելի է դրան խելամտություն անուանել, բայց բարի կամքի ծառայութեան մէջ: Կամ էլ խելացիություն, բայց առաքինի ձեւը: Այս առումով է որ խոհեմությունը միւս բոլոր առաքինությունների նախապայմանն է. առանց նրան, չենք կարող իմանալ այլ առաքինությունները ինչպէս օգտագործել կամ ինչպէս հասնել այն նպատակին (բարին) որ մեր դիմաց իրենք գետեղում են: ... Սոսկ արդարությունը սիրելը մեզ արդար չի դարձնում, ոչ էլ՝ խաղաղասէր՝ ինքնըստինքնեան խաղաղությունը հաւանելը: Նաեւ հարկաւոր է վճռել, որոշում կայացնել եւ գործել: Խոհեմութեամբ հաստատում է, թէ որ մէկը պատշաճ է, ինչպէս համարձակութեամբ դրանք իրականացում են:

Ստոիկ դպրոցում խոհեմությունը որպէս գիտություն էին համարում (“Գիտություն՝ ինչ անելու եւ ինչ չանելու մասին”, ասում էին): Արիստոտելը ընդունելիօրէն իրենց կարծիքը հերքեց, քան զի գիտությունը գործ ունի ճշգրտությունների հետ, մինչդեռ խոհեմությունը ներառում է միայն պատահականություններ: Խոհեմությունը ենթադրում է անյստակություն, վտանգ, արկած եւ չզիտեցածը: Աստուած սրա կարիքը չի ունենայ, բայց ինչպէ՞ս կարող է մարդ առանց սրան մնալ: Խոհեմությունը գիտություն չէ. ասելի ճիշտ, նա գիտութեան տեղն է առնում, ուր որ այն թերություններ ունի: Մէկը ծանրութեթեւ է անում միայն երբ նա պէտք է ինչ-որ բան որոշի, այլ կերպ ասած՝ երբ որեւէ փաստ առաջ բերել հնարաւոր կամ բաւարար չէ. այս այն դէպքն է, երբ մէկը պիտի ուզի ոչ միայն լաւ նպատակներ, այլ նաեւ լաւ միջոցներ, որպէս զի հասնի դրանց: Լաւ հայր լինելու համար, բաւական չէ երեխաներին սիրել, ոչ էլ բաւական է իրենց բարի մաղթանքներ անել, որ այն կատարուի: Սիրով չի կարելի խելամտութեան պակասը պատճառաբանել: Յոյները սա գիտէին, գուցէ մեզանից էլ ասելի լաւ: “Phronesis”-ը գործնական իմաստութեան պէս է. գործելու իմաստություն, գործելու համար, գործելու ընթացքով: Բայց եւ այնպէս, նա իմաստութեան տեղը չի առնում (իրական իմաստութեան՝ “sophia”), որով հետեւ նաեւ բաւական չէ լաւ գործել, որպէս զի լաւ ապրել, կամ առաքինի լինել, որպէս զի լինել ուրախ: Այս պարագայում, Արիստոտելը ճիշտ էր, եւ դասական աշխարհի միւս՝ գրեթէ բոլոր ներկայացուցիչները սխալ էին. **առաքինությունը ուրախութեան միակ նախապայմանը չէ: Խոհեմությունը, սակայն, երկուսի համար էլ նախապայման է, եւ նոյնիսկ իմաստությունը չի կարող առաջնորդուել առանց նրան: Քան զի իմաստություն առանց խոհեմութեան անառողջ իմաստություն կը լինի, ուստի եւ առ հասարակ իմաստություն չի լինի:**

Գուցէ էպիկուրոսը կարեւորագոյն փաստարկը առաջ բերեց. խոհեմությունը՝ որով հետեւ նա ընտրեց [կամ ընտրո՞ւմ է] (“չափելու...եւ առաւելություններն ու անպատեհությունները դիտարկելու” միջոցով), թէ որ պահանջները պէտք է

բաւարարուեն եւ ինչ ձեւով՝ “աւելի թանկ է, նոյնիսկ քան իմաստասիրութեան”:  
Ճշմարտութիւնը ինչնէրի՞ս է պէտք, եթէ չգիտենք ինչպէս ապրել: Արդարութիւնը  
ինչի՞ն է ծառայում, եւ մենք ինչո՞ւ կ'ուզենայինք այն, եթէ մենք չենք կարողանում  
արդարօրէն գործել: Խոհեմութիւնը, կարելի է ասել, իսկական “savoir-vivre” է  
(իմանալ՝ ինչպէս ապրել): ... Խոհեմութիւնը նախատեսում կամ հաշուարկում է  
հաճոյքը: Աշխարհիկ առաքինութիւն՝ միշտ, եւ երբեմնէրն՝ բանակցող: Որով հետեւ  
խոհեմութիւնը ապագան հաշուի է առնում՝ մշտապէս ճանաչելով, որ դրա դիմացն  
ինչպէս որ լինելու ենք [թէ դիմադրելո՞ւ ենք] մեզանից է կախուած (որի դէպքում  
խոհեմութիւնը կապ ունի ոչ թէ ակնկալիքների հետ, այլ՝ կամքի): Խոհեմ մարդը  
ուշադրութիւն է դարձնում ոչ միայն թէ ինչ է կատարում, այլ նաեւ թէ ինչ կարող է  
կատարուել. նա ե՛ւ ուշադիր է, ե՛ւ՝ զգոյշ: “Prudentia” բառը, նշում է Յիցերոնը, գալիս  
է “providere” բայից, որը նշանակում է “նախատեսել”, ինչպէս նաեւ “մատակարարել”:  
Իրականութիւնը հարկադրում է նրա օրէնքները, խոչընդոտները, շեղումները:  
Խոհեմութիւնը այս բոլորը հաշուի առնելու արուեստն է. յստակ եւ բանական  
ցանկութիւնն է: Ոչ թէ ցանկութեան՝ շտապ, հապճեպ իրականացում:  
Ռումանտիկները, որոնք իրենց երագներն են գերադասում, այն դէն են զգում: Գործող  
մարդիկ, սակայն, գիտակցում են, որ ուրիշ ձեւ չկայ, նոյնիսկ երբ նպատակին  
հասնելը անհաւանական կամ բացառիկ է: Խոհեմութեամբ են տարբերում արարքն  
ու պահի տակ գործելը, հերոսներն ու տաքագլուխները: Դա պարզապէս այն է, ինչ  
Ֆրէյդը անուանում էր իրականութեան սկզբունքը, կամ գոնէ դրան  
համապատասխան առաքինութիւնն է: Դա հնարաւորինս շատ հաճոյք ստանալու  
մասին է, եւ հնարաւորինս քիչ՝ տանջուելու: Ուստի, **խոհեմութիւնը մարդկանց  
համար այն է, ինչ բնագործ՝ անասուններին:**

Խոհեմութիւն հնաւուրց գաղափարը (“phronesis”, “prudentia”) շատ աւելին է,  
քան սոսկ վտանգից խուսափելը, որը եւ քիչ թէ շատ այն իմաստն է, որ մեզ է հասել:  
Որոշակի համարձակ քայլեր կան, որոնց ձեռնարկելը եւ վտանգներ, որոնց  
դիմադրելը մենք պէտք է իմանանք. որտեղից էլ խոհեմութիւնը հին իմաստով՝ որպէս  
“վտանգների եւ որոշումների առաքինութիւնը”: Խոհեմութիւնը նոյնը չէ, ինչ  
սարսափը կամ վախկոտութիւնը՝ ինչը արդիական իմաստը երբեմնէրն թելադրում է:  
Նա համարձակութիւն է ենթադրում. առանց համարձակութեան, խոհեմութիւնը  
հասնում է վախկոտութեան, ինչպէս եւ առանց խոհեմութեան, համարձակութիւնը  
հասնում է անշրջահայեացութեան ու անմտութեան: Նախ եւ առաջ, մի՛ հասցրու  
[խուսափելի] վնաս. նախ եւ առաջ՝ պաշտպանի՛ր: Այսպիսինն է խոհեմութեան  
էութիւնը, եւ առանց սրա առաքինութիւններն իսկ անոյժ կը լինէին կամ նոյնիսկ՝  
վնասակար:

Խոհեմութիւնը միշտ չի ներառում վտանգաւոր քայլերի դիմել, ոչ էլ մշտապէս  
վտանգից խուսափել: Ի՞նչ քայլեր ձեռնարկել: Ի՞նչ վտանգների դիմադրել: Ինչքանո՞վ  
կարող եմ սահմանափակումներս գերազանցել եւ դէպի ի՞նչ նպատակ:  
“Խոհեմութիւնը”, ասում է Աւգոստինոսը. “սէրն է, որը ըմբռնողութեամբ է ընտրում”:  
Ոչ թէ ձեռք բերելիք առարկան, որին հետամուտ է լինում ցանկութիւնը, այլ  
միջոցներն այն հայթայթելու կամ պահպանելու: Ըմբռնողութիւնը մայրերի, կամ

սիրելեանների: Որպէս զի իրենց սիրածներին սէրը պաշտպանեն կամ ունենան, անում են այն, ինչը պէտք է, կամ (քան զի մտաւորական առաքինութիւնները միշտ ընդգրկում են սխալուելու վտանգը) գոնէ այն, ինչ իրենք կարծում են, որ պէտք է անեն, իսկ իրենց հոգացողութիւնից բխում է մարդկայնութիւնը՝ իրենցը եւ մերը: Մերն առաջնորդում է նրանց. խոհեմութիւնը՝ լուսաւորում: Թող այն մարդկութեա՛նն իսկ լուսաւորի: Եթէ խոհեմութիւնը, ինչպէս ասել եմ, հաշուի է առնում ապագան, դա նրա համար է, որ ապագան մոռանալը վտանգաւոր եւ անբարոյական կը լինէր: Խոհեմութիւնն այն ինքնահակասող ապագայի յիշողութիւնն է, կամ, աւելի լաւ (որով հետեւ յիշողութիւնն ինքնին առաքինութիւն չէ)՝ ապագային այն ինքնահակասող եւ անհրաժեշտ հաւատարմութիւնը: Ծնողները՝ ուզելով ապահովել իրենց զաւակների ապագան այս գիտակցում են: ... Իշխանութեան շատանալը ենթադրում է աւելի պատասխանատուութիւններ: ... Մենք մեզ ենք խաբում եթէ կարծենք թէ խոհեմութիւնը անցեալին է պատկանում. մեր առաքինութիւնների ամենաարդիականն է, կամ, աւելի ճիշտ, այն առաքինութիւնը, որ արդի ժամանակաշրջանը դարձրել է ամենաանհրաժեշտը: ... Քանի՞ ահռելի արարքներ են կատարուել յանուն Բարու: Քանի՞ յանցագործութիւններ՝ յանուն առաքինութեան: Գրեթէ միշտ խոհեմութեան խախտման հետեւանքով: Պէտք է զգոյշ լինենք Բարով կուրացածներից: Նրանք չափից դուրս կապուած են իրենց սկզբունքներին, որ անհատներին հաշուի առնեն, չափազանց վստահ են իրենց նպատակներին, որ հետեւանքներին մասին մտածեն:

Բարոյականութիւնը առանց խոհեմութեան կամ ապարդիւն է, կամ՝ վտանգաւոր: “Caute”, ասում է Սպինոզան. “Ուշադիր եղի՛ր”: Կարճ ասած՝ **բարոյականութիւնը բաւարար չէ առաքինութեան համար. առաքինութիւնը նաեւ պահանջում է իւրացիութիւն ու յստակութիւն:** Անխոհեմ է միայն բարոյականութեան հնազանդել, եւ անբարոյական է անխոհեմ լինել: